Յետոյ պատոելին ընդառաջ եկաւ, ընդունեց մեզ, որպէս մի մարդ, որ իր տանը հիւր էր ընդունում, այդ խօսքերով.

— Բարով էք եկել, հազար բարով, իմ աչքի վրայ, իմ գլխի վրա...

Յայտնի չէ, թէ այլեւս նրա որտեղի վրայ պէտք է լինէր մեր ընդունելութիւնը, որովհետեւ աշակերտներից մէկը այդ միջոցին փռթկաց, եւ պատոելիի ճառը ընդհատոեցաւ: Նա երեսը շուռ տոեց դէպի եղեռնագործը եւ ձեռքով սպառնալով՝ մրթմրթաց. «սպասի՛ր, գարշելի»...

— Ի՞նչ են սովորում այստեղ, — հարցրեց Ասլանը:

— Ամէն բան սովորում են, պարոն, — պատասխանեց պատոելին, աջ ձեռքի ցուցամատով աջ կողմի պնչածակը քչփորելով, — ինչ որ կամենում էք, հարցրէք, բլբլուլի պէս պատասխան կը տան:

— Այդ լաւ է, — ասաց Ասլանը ժպտալով:

— Տեսնո՞ւմ էք այդ փոքրիկին, պարոն, — նա ցոյց տոեց մի ութ տարեկան երեխայ, — կարող է ամբողջ «Հայր-մերը» թարսայ ասել:

— Ինչպէ՞ս թարսայ ասել:

— Այնպէս... այսինքն... զօր օրինակ... տակից դէպի վեր... այնպէս ասել, — պատասխանեց պատոելին կակազելով:

— Երեւի դրանում մի առանձին միտք կայ, որ դուք «հայր-մերըէ թարսայ էք սովորեցնում, — հարցրեց Ասլանը լուրջ կերպով:

— Ինչպէս չէ, պարոն, այո՛, առանձին միտք կայ, պարոն, — կրկնեց պատոելին վարդապետական եղանակով: — Երբ «Հայր-մերը» թարսայ են կարդում, Յիսուս Քրիստոսի շնորհքով, սատանան իր պոչի վրայ մեխւում է գետնին, էլ չէ շարժւում տեղից: Դա փորձոած է, շատ անգամ փորձոած է, պարոն:

Ասլանը դարձաւ դէպի փոքրիկ աշակերտը:

— Դէ՛, իմ քաջ, տեսնենք՝ ինչպէս ես սատանային պոչի վրայ կանգնեցնում:

Փոքրիկ աշակերտը վեր կացաւ նստած տեղից, երկու ձեռքերը միմեանց վրայ կպցրեց կուրծքին, երկու անգամ հազաց եւ անմեղ աչքերը պլշացնելով, կարդաց. «ամեն յաւիտեան փառք եւ զօրութիւն եւ արքայութիւն է քո զի»...

— Բաւական է, — ընդհատեց Ասլանը, — այս անգամ սատանային հանգիստ թողեցէք: